ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 մարտի 2016 թվականի N 243 - Ն

ԱՎԻԱՑԻՈՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱ-
ՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԱՅՆ ԿՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել ավիացիոն անվտանգության ծառայությունների աշխատողների համազգեստի նկարագիրը և այն կրելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2016 թ. մարտի 15
Երևան

243k.voroshum

Հավելված
ՀՀ կառավարության 2016 թվականի
մարտի 3-ի N 243 - Ն որոշման

ԱՎԻԱՑԻՈՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱ-ՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԱՅՆ ԿՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օդանավակայանների ավիացիոն անվտանգության ծառայությունների (վերահսկողության և ավիացիոն անվտանգության հսկողության ստորաբաժանումների) (այսուհետ՝ ծառայություն) աշխատողների համազգեստի նկարագրի և այն կրելու հետ կապված հարաբերությունները:

2. Ծառայության աշխատողները համազգեստը կրում են ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ:

3. Համազգեստը պետք է համապատասխանի սույն կարգի պահանջներին և պահվի անթերի վիճակում:

II. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՈՒՏՔԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

4. Ծառայության մուտքերի վերահսկողության ստորաբաժանման աշխատողների կրծքանշանն աստղաձև է, 6 անկյունով՝ պատրաստված դեղին գույնի մետաղից: Կրծքանշանի կենտրոնում սև տառերով դրոշմագրված են հայերեն «ԱՎԻԱՑԻՈՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» և անգլերեն «AVIATION SECURITY» բառերն ու կրծքանշանի համարը: Կրում են կրծքավանդակի ձախ կողմում:

5. Ծառայության մուտքերի վերահսկողության ստորաբաժանման տղամարդկանց համազգեստն է՝

1) ***գլխարկ՝ ձմեռային՝*** կիսաբրդյա, սև գույնի.

2) ***գլխարկ՝ ամառային (կեպկա)***՝ սև գույնի, առջևի հատվածում սպիտակ տառերով գրված են հայերեն «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» և անգլերեն «SECURITY» բառերը.

3) ***փաբապ՝ ձմեռային***՝ կիսաբրդյա, սև կտորից, 2 ներկարված կողային գրպանով, ծնկների հատվածում և հետևի մասում՝ 2 արտաքին գրպանով՝ կափույրով.

4) ***փաբապ՝ ամառային՝*** սև կտորից, 2 ներկարված կողային գրպանով, ծնկների հատվածում և հետևի մասում՝ 2 արտաքին գրպանով՝ կափույրով.

5) ***բաճկոն՝ կապույտ գույնի, ձմեռային***՝ շղթայով և ամրացնող կոճակներով, օձիքով և հանովի գլխարկով, գոտկատեղում և թևամասում՝ զուգահեռ 3 լուսարձակող ժապավենով, առջևի հատվածում՝ դեպի վեր բարձրացող 4 գրպանով, կրծքամասի գրպանի վերևում և հետևամասում սպիտակ տառերով գրված են հայերեն «ԱՎԻԱՑԻՈՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» և անգլերեն «AVIATION SECURITY» բառերն ու տվյալ օդանավակայանի անվանումը.

6) ***բաճկոն՝ սև գույնի՝*** շղթայով և օձիքով, կողային գրպաններով, առջևի վերևի աջ հատվածում՝ ներկարված շղթայով գրպան, կրծքավանդակի հատվածում սպիտակ գույնով պատկերված է «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» փակ բաժնետիրական ընկերության տարբերանշանը (այսուհետ՝ տարբերանշան), իսկ թիկունքին՝ սպիտակ տառերով գրված են հայերեն «ԱՎԻԱՑԻՈՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» և անգլերեն «AVIATION SECURITY» բառերը.

7) ***սվիտեր՝ կապույտ և սև գույների՝*** կիսաբրդյա կտորից, ձախ թևքի վրա 12 չափսի տառատեսակով դեղին կամ կարմիր գույնի թելով ասեղնագործված են հայերեն «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» և անգլերեն «SECURITY» բառերն ու տարբերանշանը.

8) ***սվիտեր՝ կարմիր՝*** բրդյա, ձմեռային, երկար թևքերով, առջևի մասում կոճկվում է շղթայով, առջևի ձախ հատվածում սպիտակ գույնով պատկերված է տարբերանշանը, թիկունքին սպիտակ տառերով գրված են հայերեն «ԱՎԻԱՑԻՈՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» և անգլերեն «AVIATION SECURITY» բառերը, սպիտակ գույնով պատկերված են տար-

բերանշանը, տվյալ օդանավակայանի անվանումն ու հայերեն «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ» և անգլերեն «Armenia» international airports» CJSC» բառերը.

9) *շապիկ՝ կարճաթև՝* սև գույնի, բամբակյա, թիկունքին սպիտակ տառերով գրված են հայերեն «ԱՎԻԱՑԻՈՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» և անգլերեն «AVIATION SECURITY» բառերը, իսկ կրծքավանդակի հատվածում սպիտակ գույնով պատկերված է տարբերանշանը.

10) *ժիլետ՝ անդրադարձիչ, առանց թևերի՝* օդանավակայանի տարածքում գիշերային ժամերին ծառայություն իրականացնելու համար՝ գազարագույն պոլիէթիլենից, էլաստիկ: Առջևի հատվածում և թիկունքին՝ լուսարձակող ժապավեններով: Թիկունքի հատվածում կապույտ տառերով գրված են հայերեն «ԱՎԻԱՑԻՈՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» և անգլերեն «AVIATION SECURITY» բառերը.

11) *կոշիկ՝ կիսաճտքավոր՝* կարված է սև բնական կաշվից, միջադիրը՝ բյազ կամ համանման կտոր, երեսամասից կապվում է քուղերով:

6. Ծառայության մուտքերի վերահսկողության ստորաբաժանման կանանց համազգեստ է՝

1) *գլխարկ՝ ձմեռային՝* կիսաբրդյա, սև գույնի.

2) *գլխարկ՝ ամառային (կեպկա)՝* սև գույնի, առջևի հատվածում սպիտակ տառերով գրված են հայերեն «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» և անգլերեն «SECURITY» բառերը.

3) *պարեգոտ՝ ձմեռային՝* կիսաբրդյա, սև կտորից, 2 ներկարված կողային գրպանով, ծնկների հատվածում և հետևի մասում՝ 2 արտաքին գրպանով՝ կափույրով.

4) *պարեգոտ՝ ամառային՝* սև կտորից, 2 ներկարված կողային գրպանով, ծնկների հատվածում և հետևի մասում՝ 2 արտաքին գրպանով՝ կափույրով.

5) *բաճկոն՝ կապույտ գույնի, ձմեռային՝* շղթայով և ամրացնող կոճակներով, օձիքով և հանովի գլխարկով, գոտկատեղում և թևամասում՝ զուգահեռ 3 լուսարձակող ժապավենով, առջևի հատվածում՝ դեպի վեր բարձրացող 4 գրպանով, կրծքամասի գրպանի վերևում և հետևամասում սպիտակ տառերով գրված են հայերեն «ԱՎԻԱՑԻՈՆ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» և անգլերեն «AVIATION SECURITY» բառերն ու տվյալ օդանավակայանի անվանումը.

6) ***ավիրտեր՝ կապույտ և սև գույների՝*** կիսաբրդյա կտորից, ձախ թևքի վրա 12 չափսի տառատեսակով դեղին կամ կարմիր գույնի թելով ասեղնագործված են հայերեն «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» և անգլերեն «SECURITY» բառերն ու տարբերանշանը.

7) ***ավիրտեր՝ կարմիր՝*** բրդյա, ձմեռային, երկար թևքերով առջևի մասում կոճկվում է շղթայով, առջևի ձախ հատվածում սպիտակ գույնով պատկերված է տարբերանշանը, թիկունքին սպիտակ տառերով գրված են հայերեն «ԱՎԻԱՑԻՈՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» և անգլերեն «AVIATION SECURITY» բառերը, սպիտակ գույնով պատկերված են տարբերանշանը, տվյալ օդանավակայանի անվանումն ու հայերեն «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ» և անգլերեն «Armenia international airports» CJSC» բառերը.

8) ***շապիկ՝ կարճաթև՝*** սև գույնի, բամբակյա, թիկունքին սպիտակ տառերով գրված են հայերեն «ԱՎԻԱՑԻՈՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» և անգլերեն «AVIATION SECURITY» բառերը, իսկ կրծքավանդակի հատվածում սպիտակ գույնով պատկերված է տարբերանշանը.

9) ***կոշիկ՝ կիսաճտքավոր՝*** կարված է սև բնական կաշվից, միջադիրը՝ բյազ կամ համանման կտոր, երեսամասից կապվում է քուղերով:

III. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՎԻԱՑԻՈՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԶԳԵՍՏԸ

7. Ծառայության ավիացիոն անվտանգության հսկողության ստորաբաժանման տղամարդկանց համազգեստն է՝

1) ***վերնաշապիկ՝ տղամարդու, սպիտակ՝*** երկար և կարճ թևքերով, ծալովի օձիքով, կոճակներով, կրծքամասում՝ վրադիր գրպան, գրպանի վերևի ձախ հատվածում՝ կապույտ գույնի թելով ասեղնագործված է տարբերանշանը.

2) ***փողկապ՝*** կարմիր գույնի.

3) ***գաբարդ՝ գղամարդու, կիսաբրդյա՝*** մոխրագույն կտորից, ուղիղ ուրվագծով: Գոտին՝ գոտեմակօղերով, կոճկվում է կոճակով և շղթայով, արտաքին գրպանները՝ թեք, ներկարված: Հետևամասի աջ կողմում՝ կոճակով կոճկվող գրպան.

4) ***գաբարդ՝ գղամարդու՝*** մոխրագույն կտորից, ուղիղ ուրվագծով: Գոտին՝ գոտեմակօղերով, կոճկվում է կոճակով և շղթայով, արտաքին գրպանները՝ թեք, ներկարված: Հետևամասի աջ կողմում՝ կոճակով կոճկվող գրպան.

5) ***պիջակ՝ գղամարդու՝*** կապույտ գույնի կտորից, կոճկվում է առաջամասի կենտրոնում տեղադրված կոճակներով, առաջամասի ներքևում դեպի վեր բարձրացող ներկարված գրպաններով, կրծքամասում՝ դեպի վեր բարձրացող գրպանով, որի ձախ անկյունում սպիտակ գույնի թելով ասեղնագործված են տարբերանշանը, հայերեն «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» և անգլերեն «SECURITY» բառերը.

6) ***ավիտեր՝ կարմիր՝*** բրդյա, ձմեռային, երկար թևքերով, առջևի մասում կոճկվում է շղթայով, առջևի ձախ հատվածում սպիտակ գույնով պատկերված է տարբերանշանը, թիկունքին սպիտակ տառերով գրված են հայերեն «ԱՎԻԱՑԻՈՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» և անգլերեն «AVIATION SECURITY» բառերը, սպիտակ գույնով պատկերված են տարբերանշանը, տվյալ օդանավակայանի անվանումն ու հայերեն «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ» և անգլերեն «Armenia» international airports» CJSC» բառերը.

7) ***բաճկոն՝ կապույտ գույնի, ձմեռային՝*** շղթայով և ամրացնող կոճակներով, օձիքով և հանովի գլխարկով, գոտկատեղում և թևամասում՝ զուգահեռ 3 լուսարձակող ժապավենով, առջևի հատվածում՝ դեպի վեր բարձրացող 4 գրպանով, կրծքամասի գրպանի վերևում և հետևամասում սպիտակ տառերով գրված են հայերեն «ԱՎԻԱՑԻՈՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» և անգլերեն «AVIATION SECURITY» բառերն ու տվյալ օդանավակայանի անվանումը.

8) ***կոշիկներ՝*** սև գույնի, բնական կաշվից.

9) ***կոշիկ՝ կիսաճկքավոր, ձմեռային***՝ կարված է սև բնական կաշվից, միջադիրը՝ մորթի, կոճկվում է շղթայով:

8. Ծառայության ավիացիոն անվտանգության հսկողության ստորաբաժանման կանանց համազգեստն է՝

1) ***վերնաշապիկ՝ կանացի, սպիտակ՝*** երկար և կարճ թևքերով, ծալովի օձիքով, կոճակներով, կրծքամասում՝ ձախ հատվածում կապույտ գույնի թելով ասեղնագործված է տարբերանշանը.

2) ***փաբատ՝ կանացի, կիսաբրդյա՝*** կապույտ գույնի կտորից, ուղիղ ուրվագծով: Կոճկվում է կոճակով և շղթայով.

3) ***փաբատ՝ կանացի՝*** կապույտ գույնի կտորից, ուղիղ ուրվագծով: Կոճկվում է կոճակով և շղթայով.

4) ***պիջակ՝ կանացի՝*** կապույտ գույնի կտորից: Կոճկվում է առաջամասի կենտրոնում տեղադրված կոճակներով, առաջամասի ներքևում՝ դեպի վեր բարձրացող ներկարված գրպաններով, կրծքամասում սպիտակ գույնի թելով ասեղնագործված են տարբերանշանը, հայերեն «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» և անգլերեն «SECURITY» բառերը.

5) ***ավիտեր՝ կարմիր՝*** բրդյա, ձմեռային, երկար թևքերով, առջևի մասում կոճկվում է շղթայով, առջևի ձախ հատվածում սպիտակ գույնով պատկերված է տարբերանշանը, թիկունքին սպիտակ տառերով գրված են հայերեն «ԱՎԻԱՑԻՈՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» և անգլերեն «AVIATION SECURITY» բառերը, սպիտակ գույնով պատկերված են տարբերանշանը, տվյալ օդանավակայանի անվանումն ու «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ» և անգլերեն «Armenia» international airports» CJSC» բառերը.

6) ***բաճկոն՝ կապույտ գույնի, ձմեռային***՝ շղթայով և ամրացնող կոճակներով, օձիքով և հանովի գլխարկով, գոտկատեղում և թևամասում՝ զուգահեռ 3 լուսարձակող ժապավենով, առջևի հատվածում՝ դեպի վեր բարձրացող 4 գրպանով, կրծքամասի գրպանի վերևում և հետևամասում սպիտակ տառերով գրված են հայերեն «ԱՎԻԱՑԻՈՆ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» և անգլերեն «AVIATION SECURITY» բառերն ու տվյալ օդանավակայանի անվանումը.

7) ***կոշիկներ՝*** սև գույնի, բնական կաշվից.

8) ***կոշիկ՝ կիսաճկքավոր, ձմեռային***՝ կարված է սև բնական կաշվից, միջադիրը՝ մորթի, կոճկվում է շղթայով:

IV. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԶԳԵՍՏ ԿՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

9. Վերնազգեստը, տաբատը և վերնաշապիկը պետք է կրել մաքուր, հարդարված և արդուկված վիճակում, թույլատրվում է վերնաշապիկը կրել առանց բաճկոնի, փողկապով:

10. Ամառային կամ ձմեռային համազգեստի անցնելը հայտարարվում է ծառայության ղեկավարի կարգադրությամբ:

11. Թույլատրվում է սույն կարգի աղյուսակի 13-րդ կետով սահմանված կարճաթև վերնաշապիկը փոխարինել երկարաթև վերնաշապիկով և հակառակը, իսկ 19-րդ կետով սահմանված ձմեռային կոշիկները՝ կոշիկներով և հակառակը:

12. Ծառայության ստորաբաժանումների աշխատողներին համազգեստ կրելու օգտագործման ժամկետները սահմանված են աղյուսակում.

Աղյուսակ

NN ը/կ	Անվանումը	Քանակը՝ մեկ մարդու համար (հատ)	Կրելու ժամկետը (տարի)
1.	Գլխարկ՝ ձմեռային	1	2
2.	Գլխարկ՝ ամառային	1	1
3.	Տաբատ՝ ձմեռային	1	1
4.	Տաբատ՝ ամառային	1	1
5.	Բաճկոն՝ կապույտ գույնի, ձմեռային	1	3
6.	Բաճկոն՝ սև գույնի	1	2
7.	Սվիտեր՝ կապույտ և սև	2	1
8.	Սվիտեր՝ կարմիր	1	2
9.	Շապիկ՝ կարճաթև	2	1
10.	Ժիլետ՝ անդրադարձիչ, առանց թևերի	1	1
11.	Կոշիկ՝ կիսաճտքավոր	1	1
12.	Վերնաշապիկ՝ սպիտակ, երկար թևքերով	2	1
13.	Վերնաշապիկ՝ սպիտակ, կարճ թևքերով	2	1
14.	Փողկապ	1	1
15.	Տաբատ՝ տղամարդու	1	1
16.	Տաբատ՝ տղամարդու, կիսաբրդյա	1	1
17.	Պիջակ՝ տղամարդու	1	2
18.	Կոշիկ	1	2
19.	Կոշիկ՝ կիսաճտքավոր, ձմեռային	1	2
20.	Տաբատ՝ կանացի	1	1
21.	Տաբատ՝ կանացի, կիսաբրդյա	1	1
22.	Պիջակ՝ կանացի	1	2
23.	Կրծքանշան	1	2

V. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԶԳԵՍՏՆԵՐԻ ՆԿԱՐՆԵՐԸ

13. Ծառայության մուտքերի վերահսկողության ստորաբաժանման աշխատողների համազգեստի թևքի նշանը (Նկար 1) և կրծքանշանը (Նկար 2) ունեն հետևյալ տեսքը.

Նկար 1 և Նկար 2

14. Ծառայության ստորաբաժանումների աշխատողների համազգեստի տարբերանշանը (Նկար 3) ունի հետևյալ տեսքը.

Նկար 3

15. Ծառայության մուտքերի վերահսկողության ստորաբաժանման աշխատողների համազգեստը (Նկար 4) ունի հետևյալ տեսքը.

Նկար 4

16. Ծառայության ավիացիոն անվտանգության հսկողության ստորաբաժանման աշխատողների համազգեստը (Նկար 5) ունի հետևյալ տեսքը.



Նկար 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ